



ԶԱՐՄԱՆԱԶԱՆ 2021

Արձանագրութիւնները սկսած են

«Զարմանազան» 2021՝ արեւմտահայերէնով ամստոնային ծրագիրը նախատեսուած է որ տեղի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու Օթ-Սաւուա շրջանը, Յուլիս 12-էն մինչեւ Օգոստոս 7: Ծրագիրը ունի երեք բաղադրիչներ որոնք սերտօրէն առնչուած են իրարու.

- 10-էն 17 տարեկան պատանիներու համար նախատեսուած ծրագիր մը.
- 18-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ծրագիր մը:

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն զանազան աշխատանոցներու պիտի մասնակցին, ի շարս որոնց՝ տեսողական եւ լսատեսողական արուեստներ, արհեստներ, երաժշտութիւն, մարմնային եւ թատերական արտայայտութեան զարգացում, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, խմբային խաղեր, բնութեան մէջ պտոյտներ եւ նամբորդութիւններ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ յարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ հայերէնը, մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ներկայութեամբ: Երիտասարդներու խումբին մասնակիցները պէտք է առնուազն միջին մակարդակով հայերէն գիտնան:

Այս երկու ծրագիրներու մասնակիցներուն թիւը սահմանափակ է:

- Համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն:

Սփիւռքեան խտացեալ ծրագիր մըն է այս մէկը, որուն աւարտին Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնարկը (Ինալֆօ) կու տայ վկայագիր մը: Ծրագիրը, գոր պիտի վարեն մասնագէտ դասատուներ, կ'առաջարկէ թէ՛ տեսական դասաւանդութիւն մը եւ թէ՛ վերապատրաստութեան խմբային աշխատանքներ:

Այս ծրագրին կ'ընդունուի միայն 15 ուսուցիչ:

Զարմանազանը այն վայրն է, ուր ծրագրի մը շուրջ կը հաւաքուին Սփիւռքի երեխաները, երիտասարդները, ուսուցիչները եւ ուղեկիցները:

Արձանագրութեան եւ այլ տեղեկութիւններու համար այցելեցէք մեր կայքէջը:

www.zarmanazan.com

Եթէ ստիպուիմք կեցութիւնը ջնջել համանարակին բերմամբ որոշուելիք սահմանափակումներու պատճառով, ձեր արձանագրութիւնը վաւեր կը մնայ նոյն թուականներուն տեղի ունենալիք «Զարցանց 2.1» առցանց ծրագրին համար:

«Զարմանազան» մանկավարժական ծրագիրը ստեղծուած է 2017-ին «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքին կողմէ, որպէս արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրի մէկ բաժինը: Ան կազմակերպուած է Լիոնի «Հազար ու մէկ աշխարհ» ընկերակցութեան եւ Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկին համագործակցութեամբ:

«Զարմանազան» ծրագիրը վաւերացուած է Ֆրանսայի երիտասարդութեան եւ Մարզանքի Նախարարութեան կողմէ: